մարդ՝ վօրձակնէր[127]: Տղամարդը, որը պատանի ժամանակ կերակուր է կերել կնոջ հետ մեկ ամանից՝ վարակվում էր նրա անմորուք լինելուց և վերջը շատ նոսր մորուք կունենար[128]: Մեկից մյուսին է անցնում երկարակեցությունը: Ծերունու նստած տեղը շտապում էր բռնել մի պատանի կամ երիտասարդ, այն համոզմամբ, թե նրա տարիքին ինքն էլ այդպիսով կարող է հասնել: Զանազան հմայող՝ թովչող իրերին վերագրվող մագիկ ներգործությունը բացատրվում էր մեծ մասամբ այն նախնական հասկացողությամբ, թե նրանց բնական հատկությունը կարող է անցնել և՛ մարդուն, և՛ կենդանուն: Այսպես՝ տղատէրը հարսնատիրոջն ուղարկվող խօնշանէրի մեջ դնում էր խնձոր, նուռ, այն համոզմամբ, որ այդ պտուղների բազմածնությունը հարսնացուին է հաղորդվելու:

Նույնպես նորապսակ զույգին բեղմնավորություն պատճառելու համար տուն մտնելիս նրանց գլխին ցորեն, շագանակ, կաղին և այլ պտուղներ էին ցանում: Նույնիսկ կենդանուց նրա առանձնահատկությունը կարող էր անցնել մարդուն: Եթե հղի կինը նապաստակի միս ուտեր, ծնված երեխան կքնի աչքերը բաց, նապաստակի պես: Որպեսզի լացկան երեխան դադարեր լաց լինելուց և հանգիստ քներ, նրա բարձին կարում էին նապաստակի ականջներ այն ենթադրությամբ, որ այդ եղանակով նապաստակի լուռ և երկար քնելը կհաղորդվի երեխային[129]: Մորթած մսից և դիակից մահի զորությունը կարող էր տարածվել մանկան վրա, ուստի անհրաժեշտ էր երեխային դուրս հանել կամ ձեռքի վերցնել նրան՝ երբ միս էին ներս բերում կամ ննջեցյալին մոտից անցկացնում: Պետք էր յոթ տներից, որտեղ երեխաները չեն մեռնում, կտորներ հավաքել և շոր կարել, այն ընտանիքի նորածնի համար, որտեղ ծնված երեխաները մեռնում էին: Այստեղ իրի միջոցով նրա տիրոջ հատկությունն անցնում էր մեկից մյուսին: Անհրաժեշտ չէր, որ բնությունից տրված լինի մագիկ զորությունը: Կային այնպիսի շնորհիքներ, որ մարդը և իրը որևէ դիպվածով էր ձեռք բերում և այնուհետև նրանով կարող էր ազդել իր շրջապատի վրա, թեև նա չի կարող ուրիշին փոխանցել որպես վարակ: Այսպիսի շնորհիքներից էր այն մագիկ ուժը, որ ստանում էր օձի բերանից գորտ ազատողը, կամ մեծ գետի՝ Արաքսի մյուս ափը տեղափոխվողը: Այն մարդը, որ գորտին նեղ տեղից ազատել էր կամ գետի մեկ ափից մեծ արգելքի վրայով մյուսն էր անցել, փեշով ջուր տալով ծանր երկունքով բռնված կնոջը, օգնում էր երեխային նեղ տեղով անցնելու կամ կյանքի մեկ ափից մյուսը փոխադրվելու:

Նորապսակների կամ նոր ծննդկանի քառասունքի ընթացքում կեղտոտված, հարամած, պղծված լինելը կարող էր անցնել ուրիշի տան երեխային: Երբ գոյացած շերամին՝ տերևին, հացին[130] տրվում էր առավելագույն և գերադաս զորություն, պիտի կարծել այն պատճառով էր, որ ենթադրվում էր, թե ուրիշից վերցրած, խլած, գողացած նունը՝ տերևը, հացը պիտի որ ավելի լավ լինի, քան թե սեփական ունեցածը և այդ նրա լազաթն էր, կարծես նրա գերազանցությամբ ավելի ուժ ձեռք բերած: Նրա լավությունը կարող էր մյուսին անցնել... Նույնիսկ ամանի դատարկությունը կարող էր կենդանու կամ մարդու վրա փոխանցվել: Ասում էին, որ դատարկ ամանը ձեռքին չպիտի շրջել

---

127 СМОМПК, вып. XIII, отд. I, էջ 114:

128 Նույն տեղում:

129 Նույն տեղում:

130 Հիվանդ երեխային գողացած հացի ծակով անցկացնելը: